ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը ճգնաժամային կառավարման համատեքստում,

Ընդունելով կամավորական միասնական ջոկատներ ստեղծելու և զարգացնելու Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Կողմերն իրականացնում են մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.2 Ինստիտուտը կազմակերպում և իրականացնում է ֆիզիկական պատրաստվածության դասընթացներ հրշեջ-փրկարարաների համար Ինստիտուտի կամ Ակադեմիայի համապատասխան տարածքներում՝ համաձայն կողմերի միջև հետագայում հաստատվող դասընթացի պլանի և ժամանակացույցի:

2.3 Ստեղծում են կամավորական ուսանողական թիմեր և միասնական ջոկատներ և համակարգում են նրանց աշխատանքները,

2.4 Իրականացնում են փոխայցելություններ ուսանողական պրակտիկաների ընթացքում,

2.5 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական (սպորտային, վերականգնողական, առողջարանական և այլն) բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտությունների իրականացում:

2.6 Կազմակերպում են միջազգային գիտական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի, խորհրդակցությունների համագործակցության շրջանակներում,

2.7 Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.8 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ:

2.9 Կողմերի գրադարանային ֆոնդի համատեղ օգտագործում:

3. Համագործակցությանսկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
ք. Երևան, Աճառյան 1,
Ռեկտոր՝ Համլետ Մաթևոսյան

ստորագրություն

Կ.Տ.

Կողմ 2
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան

ստորագրություն

Կ.Տ.